



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-4-Ե-1
2012թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

նախագահությամբ՝ Ա. Ավագյանի,
մասնակցությամբ ԱԽ անդամներ՝ Լ. Սարյանի, Մ. Ավանեսյանի, Ա. Լազարյանի,
Հ. Խաչատրյանի, Կ. Մարդանյանի, Կ. Սաղյանի,
Մ. Սաֆարյանի,

քարտուղարությամբ՝ Գ. Հովհաննիսյանի

2012 թվականի հոկտեմբերի 30-ին Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում, դռնփակ նիստում, քննության առավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի նախագահի թափուր պաշտոնում թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ կետով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով և 98-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու համար Կարեն Բորիսի Ղարայանի թեկնածությանը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առաջարկել Կարեն Բորիսի Ղարայանի թեկնածությունը՝ ազատելով նրան ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորի պաշտոնից:

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱՎԱԳՅԱՆ